



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«04» 05 2018թ.

No 06/3-Կ/23444-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.04.2018թ.

թիվ Պ-18 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և
307-րդ հոդվածի 3-րդ մասը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի համաձայն՝ ապրանքի տեղափոխությունը
հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերի և (կամ) առաքման կետերի միջև

տեղափոխվող կամ պահատվության, հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով կամ վերամշակման հանձնվող կամ վերադարձվող կամ վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքների վերամշակման արդյունքում վերադարձվող կամ որևէ առաքման վայրից կամ առաքման կետից ձեռք բերված և տեղափոխվող (այդ թվում՝ փոխադրողի միջոցով) ապրանքի տեղաշարժն է՝ առանց ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ մեկ անձից մեկ այլ անձին փոխանցման,

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 57-րդ կետի համաձայն՝ առաքման վայրը հարկ վճարողին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող՝ հասցե ունեցող կամ չհասցեավորված անշարժ գույքի միավորն է, առևտրի օբյեկտը, առևտրի իրականացման վայրի վաճառատեղը, անշարժ գույքի միավորներից որպես միասնություն կազմված անշարժ գույքի օբյեկտը, ընդերքի տեղամասը, ներբնակավայրային և բնակավայրերի սահմանագծերից դուրս աշխարհագրական օբյեկտը կամ ընդհանրական տարածքը (նույն հասցեում գտնվող կամ չգտնվող, սակայն հարկ վճարողին տիրապետման կամ օգտագործման իրավունքով պատկանող մեկ ընդհանրական՝ այլ անձանց տիրապետման կամ օգտագործման իրավունքով պատկանող տարածքներով չսահմանազատված տարածք), որտեղից մատակարարվում կամ տեղափոխվում է ապրանքը,

- 55-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի, ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ձեռք բերվող ապրանքների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, ինչպես նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով։

- 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ տարածքում մատակարարվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող ապրանքների (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքների և արտարժույթի) մատակարարումը կամ տեղափոխությունը պարտադիր կարգով իրականացվում է ուղեկցող փաստաթղթերով:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները, հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից գյուղատնտեսական արտադրանքի ձեռք բերման գործարքը կարող է փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով: Հարկ է նկատի ունենալ, որ նշված դեպքում ապրանքը (գյուղատնտեսական արտադրանքը) սպանդանոց տեղափոխելիս՝ ապրանքների տեղափոխությունը հավաստող ուղեկցող փաստաթղթեր դուրս չեն գրվում:

Միաժամանակ, Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների տեղափոխությունը հավաստող ուղեկցող փաստաթղթեր դուրս են գրվում ապրանքը սպանդանոցից պահեստ տեղափոխելիս:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ